9-րդ շաբաթ

Թեմա՝ «Համալսարան և համալսարանական կյանք»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ի՞նչ համալսարաններ կան ձեր երկրում:
2. Ո՞ր համալսարանում եք սովորել կամ սովորում:
3. Որտե՞ղ է ձեր համալսարանը:
4. Ի՞նչ բաժիններ կան ձեր համալսարանում:
5. Ո՞ր բաժիններն են հայտնի իրենց լավ համբավով:
6. Ի՞նչ տարբերություններ կան ձեր և մյուս համալսարանների միջև:

7. Ինչպե՞ս է կազմակերպվում ուսանողական կյանքը ձեր համալսարանում:
8. Ի՞նչ թերություններ ունի ձեր համալսարանը կամ բաժինը:
9. Ի՞նչը կփոխեիք և ինչպե՞ս:

10. Աշխարհի ո՞ր համալսարանում կուզեիք սովորել և ինչու՞:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

Ֆակուլտետ	դասախոսական կազմ
բաժին	ուսանողություն
ամբիոն	կրթության մակարդակ
մասնագիտություն	ուսումնական մեթոդներ
ծրագիր	մարդկային հարաբերություններ
բակալավրիատ	ժամանց
մագիստրատուրա	աշխատանքի հնարավորություններ
ասպիրանտուրա	հեղինակավո համալսարաններ

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ 1՝

Ուսանողական տարիները մարդու կենսագործունեության ամենաակտիվ և ամենահետաքրքիր ժամանակաշրջանն է: Ուսանողը ձեռք է բերում բարձրագույն կրթություն, մասնագիտություն, նոր ծանոթություններ և ընկերներ, շփվում է տարբեր և հետաքրքիր մարդկանց հետ, կատարում ինքնուրույն քայլեր և ըստ իր նախասիրությունների՝ կազմակերպում է իր ժամանցը: Այս անփոխարինելի տարիները թողնում են անջնջելի հետք՝ ուսանողին նախապատրաստելով կյանքի տարբեր մարտահրավերներին: Ուսանողական տարիների արդյունավետ և բազմաբովանդակ կազմակերպումը կախված է մի շարք հանգամանքներից, որոնցից

առաջինը ուսանողի լավ առաջադիմությունն է: Ուսանողական կյանքը միաժամանակ կարող է հարստացվել մի շարք այլ երևույթներով ու իրադարձություններով, երբ ուսանողը օգտվում է համալսարանի կողմից իրեն ընձեռնված հնարավորություններից, ցուցաբերում է ներհամալսարանական ակտիվ մասնակցություն:
Այս խնդրին է միտված ԵՊՀ-ում ուսանողական կառույցների համակարգը, որն ապահովում է ուսանողների արտալսարանային հարուստ և բազմազան առօրյան: Այն ընդգրկում է բոլոր նախաձեռնությունները, ծրագրերն ու միջոցառումները, որոնք կազմակերպվում են ուսումնական գործընթացից դուրս:
Համալսարանում գործում են տարբեր ուսանողական կառույցներ, մշակութային խմբեր, ակումբներ, ինչպես նաև վարչական ստորաբաժանումներ, որոնք զբաղվում են ուսանողական խնդիրներով:
Ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների ք ննարկման և շահերի ներկայացման համար ԵՊՀ-
ում գործում է սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայաց ուցչական մարմին՝ Ուսանողական խորհուրդ: Ուսանողների գիտակա ն և հետազոտական աշխատանքները խթանելու և զարգացնելու նպա տակով համալսարանում գործում է Ուսանողական գիտական ընկերու թյուն: Այս երկու կառույցները համալսարանում գործող հիմնական ուսանողական կառույցներն են, որոնք ղեկավարվում են սովորողների կողմից և ապահովում են ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին:
Ուսանողական առօրյայի կազմակերպման, ուսանողների տարբեր կարիքների բացահայտման և խնդիրների լուծման գործընթացում ներգրավված են նաև վարչական օղակներ, որոնց արհեստավարժ անձնակազմը կոչված է ապահովել համապատասխան աշխատանքների որակն ու անընդհատությունը: ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (ՈՒԽ, ՈՒԳԸ) և ռեկտորատի հետ համագործակցության աջակցության և մի շարք այլ ծրագրերի իրականացման նպատակով ԵՊՀ-ում գործում

է Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը: Մշակութային տարբեր միջոցառումների և տարբեր խմբերի աշխատանքների կազմակերպման, մշակութային դաստիարակության և այլ ծրագրերի իրականացման նպատակով համալսարանում գործում
է Մշակույթի կենտրոնը: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կ ոչված է բարձրացնել աշխատաշուկայում ուսանողների մրցունակությունը, նրանց փոխանցել տարբեր գործնական հմտություններ և գիտելիքներ և իրականացնել համապատասխան ծրագրեր: …

Աղբյուր՝ http://1course.ysu.am/ %EF%BB%BF%EF%BB%BFուսանողական-կյանք/